

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒԷՐ)

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
(СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ)

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES
(COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES)

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԳՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2017

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի և
Պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդների որոշմամբ*

Գլխավոր խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝

Արամ Մինոնյան - նախագահ (ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.),
Աշոտ Մելքոնյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան**
(պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան**
(պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան**
(արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան**
(պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան**
(պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտոր), **Հովիկ Գրիգորյան**
(պատմ. գիտ. թեկն., դոցենտ), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոցենտ),
Էդգար Հովհաննիսյան (պատմ. գիտ. թեկն., դոցենտ), **Հակոբ Պետրոսյան** (բանասիր. գիտ. թեկն.):

Главный редактор: докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Արամ Սիմոնյան (председатель, ректор ЕГУ, членкор. АН РА, докт. ист. н., проф.), **Ашот Мелконян**
(академик АН РА, докт. ист. н., проф.), **Артակ Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян**
(докт. ист. н., проф.), **Айк Аветисян** (докт. ист. н., проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. н., проф.),
Левон Чугасзян (докт. искусствовед. н., проф.), **Игит Гариббян** (докт. ист. н., проф.), **Генрих Абрамян**
(докт. ист. н., проф.), **Айказ Оганесян** (докт. ист. н., проф.), **Гамлет Петросян** (докт. ист. н., проф.),
Ашот Нерсесян (докт. ист. н., проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук), **Овик Григорян** (канд. ист. н., доц.),
Мхитар Габриелян (канд. ист. н., доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. н., доц.), **Акоп Петросян**
(канд. филолог. наук).

Editor-in-Chief- Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Aram Simonyan (Chairman, Rector of YSU, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.),
Ashot Melkonyan (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan**
(Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of
Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of
Arts, prof.), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences,
prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences,
prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences),
Hovik Grigoryan (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History,
associate professor), **Edgar Hovhannisyan** (PhD of History, associate professor), **Hakob Petrosyan**
(PhD in Philology).

ISSN 1829-2771 3

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ռաֆիկ Նահապետյան

ԳԱՅՈՍ ՊԼԻՆԻՈՍ (ԱՎԱԳ) ՍԵԿՈՒՆԴՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Քանալի բարեր- Պլինիոս Ավագ, «Բնական պատմություն», Մեծ Հայք, Անահիտ աստվածուհի, Տիգրան Մեծ, Եփրատ գետ:

Հռոմեական ականավոր պատմագիր, գիտնական ու քաղաքական գործիչ Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկունդոսը (մ.թ. 23-79 թթ.) հեղինակ է մի շարք մեծածավալ գործերի, որոնցից են «Գերմանական պատերազմները»՝ 20 գրքով, «Պատմությունը»՝ 31 գրքով, «Բնական պատմությունը»՝ 37 գրքով և այլն: Սակայն դրանցից պահպանվել է միայն վերջինը՝ «Բնական պատմությունը», որը Պլինիոսը գրել է Վեսպասիանոս կայսեր որդու՝ Տիտոսի հանձնարարությամբ: Այն կարելի է բնորոշել որպես անտիկ բնագիտական մտքի հանրագիտարան, որտեղ ընդգրկված տեղեկությունները վերաբերում են տիեզերագիտությանը, երկրագործությանը, աշխարհագրությանը, բուսական ու կենդանական աշխարհներին, հանքաբանությանը, բժշկությանը, երբեմն նաև հին աշխարհի քաղաքական, մշակութային պատմությանն ու հասարակական հարաբերություններին¹:

Բնականաբար, մեզ առավելապես հետաքրքրում են Հայաստանին վերաբերող տեղեկությունները, որոնք ներառում են երկրի քաղաքներն ու վարչական բաժանումները, բնակլիմայական պայմանները, բնաշխարհը, հանքային հարստությունները, ինչպես նաև մշակութային պատմությունն ու հասարակական հարաբերությունները²:

Առաձնապես արժեքավոր տեղեկություններ են պարունակում «Բնական պատմության» V և VI գրքերը: Պլինիոսը VI գրքում պատկերացում է տալիս Մեծ Հայքի թագավորության տարածքի չափերի մասին: Նա հայտնում է, որ Ալֆիդիոսի կարծիքով, ամբողջ Հայաստանի տարածքը 5.000.000 քալ է: Կլավդիոս կայսրը նրա երկարությունը՝ արևմուտքից դեպի արևելք՝ Ղասկուսայից (Փոքր Հայք) մինչև Կասպից ծովի ափը, հաշվում է 1.300.000 քալ, իսկ լայնությունը՝ Տիգրանակերտից մինչև Իբերիա (Վրաստան), որի սահմանագիծը Մեծ Հայքի հետ անցնում էր Կուր գետով՝ այդ թվի կեսը: Այսինքն՝ Մեծ Հայքը արևմուտքից դեպի արևելք ձգվում է 1.300 մղոն (1.950 կմ), իսկ հարավից մինչև հյուսիս՝ 650 մղոն (975 կմ): Սակայն ուսումնասիրողները նշում են, որ այս թվերը չափազանցված են և տալիս են Մեծ Հայքի չափերի վերաբերյալ այլ տվյալներ, որոնց համաձայն՝ տարածքի երկարությունը 870 կմ էր, իսկ լայնությունը՝ 550 կմ²: Արևելքում Հայաստանը սահմանագծված էր Կերավնյան լեռներով³ և Ադիաբենեով: Միջանկյալ տարածքում էր գտնվում Սոփենը (Ծոփքը), որոնցից այն կողմ մի լեռնաշղթա էր և Ադիաբենեն: Վերջինիս շրջապատում են Տիգրիսը և անմատչելի լեռներ, ձախ կողմում մեդիացիների երկիրն է, իսկ դիմացը՝ Կասպից ծովը: Այսպիսով՝ մ.թ. առաջին դարերի անտիկ խոշորագույն աշխարհագետների՝ Պլինիոս Ավագի և Պտղոմեոսի (90-168) տեղեկությունները համընկնում են «Աշխարհացոյց»-ում պահպանված

¹ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա». հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թվականը, հ. 1, Ե., 2007, էջ 287-292:

² Նյութերն ուսումնասիրելիս օգտվել ենք Ս.Մ. Կրկյաշարյանի թարգմանությունից, որը նա կատարել է «Plinit Secundi C. Naturalis historiae, vol. 1-10, Cambridge, Mass., London, 1950-1962 /Loeb Classical Library/» հրատարակությունից:

³ Տե՛ս Երեմյան Ս., Մեծ Հայքի տերիտորիան և վարչական բաժանումը մ.թ. I-II դարերում, «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Ե., 1971, էջ 838, ծան. 78:

⁴ Կերավնյան լեռները (Շանթային լեռինք) Կովկասյան լեռնաշղթայի այն մասն են, որը հյուսիսից եզերում է Ադվանքը: «Աշխարհացոյց»-ում այն կոչվում է «Կասպ-կոն լեռինք»: Տե՛ս Երեմյան Ս., Մեծ Հայքի տերիտորիան և վարչական բաժանումը մ.թ. I-II դարերում, էջ 838, ծան. 78:

տեղեկություններին՝ Հայաստանի գրաված տարածքի ու դրա սահմանների մասին: Մեծ Հայքի տարածքը նշված սահմաններով առաջին անգամ պաշտոնապես վավերացվել է մ.թ.ա. 66 թվականին՝ Տիգրան Մեծի և հռոմեական զորավար Պոմպեոսի միջև կնքված դաշնագրով: Ըստ այդ դաշնագրի՝ Մեծ Հայք պետությունը ընդգրկում էր 312x795 կմ² տարածք: Հետագայում Մեծ Հայքի տարածքը մասնակիորեն փոփոխվեց: Հռոմեական կայսրության և Պարթևական թագավորության միջև մ.թ. 37թ. կնքված համաձայնագրով Մեծ Հայքից անջատվեց և պարթևների պետությանը կցվեց «Միջագետք Հայոց» տարածաշրջանը [ներառյալ՝ Տուր-Աբդին (Ծավդեք) և Արուաստան գավառները] 27.600կմ² տարածքով, Մծբին քաղաքով: Այնուհետև Մեծ Հայք պետությունը ընդգրկում էր 285.195կմ² տարածք: Հետագայում ամեն անգամ, երբ հարց էր բարձրանում Մեծ Հայքի թագավորության տարածքի մասին, պաշտոնական հիմք էր ընդունվում 37 թ. համաձայնագիրը: Վերջին անգամ այն պաշտոնապես ընդունվեց 298 թվականի Մծբինի 40-ամյա դաշնագիրը կնքելու ժամանակ¹:

Պլինիոս Ավագի հաղորդած տեղեկություններից երևում է, որ Կլավդիոս կայսեր (41-54) կարգադրությամբ մանրամասն ուսումնասիրվել է Մեծ Հայքի թագավորության տարածքը և կազմվել է քարտեզ, որը հետագայում օգտագործել է Պտղոմեոսը: Կլավդիոս կայսեր ժամանակաշրջանի Հայաստանին վերաբերող նյութերը լայնորեն օգտագործել է նաև Գայոս Պլինիոս Սեկունդոսը² իր «Բնական պատմության» մեջ:

Աշխատության VI գրքում Պլինիոսը նշում է, որ Մեծ Հայքը բաժանված էր 120 ստրատեգիաների՝ վարչատարածքային միավորների, որոնք կոչվում էին պրեֆեկտուրաներ (բառացի «զորավարություններ»), որոնցից մի քանիսը հնում թագավորություններ էին և հայտնի էին բարբարոսական (այսինքն՝ ոչ հունական և հռոմեական) անուններով: Ուսումնասիրողների կարծիքով Պլինիոսը, խոսելով Հայաստանի 120 ստրատեգիաների կամ պրեֆեկտուրաների մասին, նկատի է ունեցել Մեծ Հայքի գավառները, որոնց թիվը այն ժամանակ մոտավորապես այդքան պիտի լիներ³:

Պատմագիրն առանձին-առանձին անդրադառնում է Մեծ և Փոքր Հայքերին: Եվ կրկին որպես ուղեցույցներ օգտագործվում են Հայաստանով հոսող գետերը: Այսպես, Մեծ Հայքը, ըստ նրա, սկսվում է Պարիադրեսի [եռներից [խոսքը պոնտական Պարիսարյան (Խաղտյաց) [եռների մասին է - Ռ.Ն.]: Հարևան Կապադովկիայից այն բաժանված էր Եփրատ, իսկ Միջագետքից՝ Տիգրիս գետերով, Ադիաբենեից՝ «լայնակի մի [եռնաշղթայով]» [նկատի է ունեցել Նիփատես (Նպատ) [եռնաշղթան]: Լայնությամբ այն տարածվում է մինչև Կյուրոս գետը [Կուր (Քուր)] անցնելով Արաքս գետից այն կողմ, իսկ երկարությամբ՝ մինչև Փոքր Հայք, որից բաժանված է Եվքսինյան Պոնտոսի [Սև ծովի] մեջ թափվող Ապսարոս գետով [Ճորոխ] և Ապսարոսին ծնունդ տվող Պարիադրես [եռներով]:

Այնուհետև նա թվարկում է Մեծ Հայքի քաղաքների անունները: Մեծ Հայքում հայտնի քաղաքներ էին Ար«սա»մոսատը (Արշամաշատ), Եփրատին մոտ՝ Կարկաթոկերտը [Ծովքի մայրաքաղաք Արկաթոկերտը], Տիգրիսի մոտ՝ Տիգրանակերտը մի բլրի վրա, Արտաշատը [Արարատյան] դաշտավայրում՝ Արաքս [գետի] մոտ: Ի դեպ, Տիգրանակերտի գտնվելու տեղի մասին հին պատմիչների հաղորդած տվյալները մտորումների տեղիք են սվել: Նշենք, որ այն որոշելու համար ուսումնասիրված վկայությունների շարքում ուրույն տեղ են գրավում նաև Պլինիոսի ցուցումները: Վերջիններիս մեջ ուշադրության է արժանի Տիգրանակերտի մոտ գտնված Պարթենիոս գետը՝ Տակիտոսի⁴ հիշատակած Նիկեփորիոն գետի հետ՝ իբրև Տիգրիս գետի ձախակողմյան վտակ:

Փոքր Հայքի հայտնի քաղաքների մասին ևս պատմագիրը տեղեկություններ է հաղորդում: Դրանք են՝ Կեսարիան, Ազան, Նիկոպոլիսը: Այս երեք քաղաքներն էլ գտնվել են Գայլ գետի հովտում: Ս. Երեմյանի կարծիքով Կեսարիան հիմա պիտի լինի Սատա-

¹ Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Ե., 1963, էջ 69:

² Տե՛ս Երեմյան Ս., Մեծ Հայքի տերիտորիան և վարչական բաժանումը մ.թ. I-II դարերում, էջ 836:

³ Տե՛ս անդ, էջ 840:

⁴ Տե՛ս Տակիտոս, Տարեգրություններ, քաղեց և լատիներենից թարգմանեց պրոֆ. Պ. Ստոնիկյան, գիրք XV, գլ. 4, Ե., 1941, էջ 97:

ըր, Ազան՝ այժմյան Ազիզ գյուղը, իսկ Նիկոպոլիսը՝ այժմյան Բյուրզ կամ Պյուրկ գյուղի մոտ¹:

Ըստ Պլինիոսի՝ Հայաստանի հարևաններից էին մենոբարդցիները, մոկսիաները, որոնք բնակություն էին հաստատել Հայաստանին ամենամոտ բարձունքներում: Ս. Երեմյանի հավաստմամբ այս ցեղերը ապրում էին Արևելյան Տիգրիսի հովտում և սրան հարող լեռներում: Մոկսիաների ցեղն ազգակից էր հայերին, նրանց անունից է ծագել Մեծ Հայքի Մոկք (Մոկս) նահանգի անունը²: Ադիաբենեի ձախ կողմում մեդիացիների երկիրն է, իսկ դիմացը՝ Կասպից ծովը:

Այս պատմիչի գրքում շատ տվյալներ կան Հայաստանի գետերի մասին: Նախ խոսվում է Եփրատի մասին և ասվում, որ գետը բխում է Մեծ Հայքի Կարենիտյան պրեֆեկտուրայից: Սա Կարնո գավառն է՝ Բարձր Հայքի 9-րդ գավառը, այժմյան Էրզրումի սանջակը: Այս գավառում էին գտնվում Եփրատ գետի ակունքները: Պլինիոսի վկայմամբ «Եփրատ գետը ամենամոտից տեսնողներից Դոմիտիոս Կորբուլոնը [խոսքը հռոմեական նշանավոր զորավար, Կապադովկիայի կուսակալ, լեզատ և Արևելքում հռոմեական բանակների գլխավոր հրամանատար Դոմիտիոս Կորբուլոնի մասին է] նրա ակունքը տեղադրում է Աբա լեռան վրա, իսկ Լիկինիոս Մուկիանոսը՝ Կապոտեն լեռան³ ստորոտին, Զիմարայից [քաղաք Փոքր Հայքում] 12.000 քայլ վերև: Այս գետը նախ կոչվում է Պյուքսիրատ«ես»: Այն հոսում է Կապադովկիայից՝ բաժանելով նախ Դերքսենեն [Դերջանը՝ Բարձր Հայքի 6-րդ գավառը], ապա Անախտիսը⁴, որոնք Հայաստանի շրջաններն են, Դասկուսան⁵ Զիմարայից (Մելիտենեի ճանապարհի վրա է գտնվել)⁶ 75.000 քայլ հեռավորություն ունի»: Անախտիս անվանումը կապված է Երիզա ավանում գտնվող Անահիտի հռչակավոր տաճարի անվան հետ: Այնտեղից մինչև Պաստոնա Եփրատը նավարկելի է 50.000 քայլ տարածության վրա, մինչև Կապադովկիայի Մելիտենե քաղաքը գետի երկարությունը 24.000 քայլ է, մինչև Հայաստանի Ելեգես⁷ քաղաքը՝ 10.000 քայլ, այս տարածության վրա են ընդունում Լյուկոս⁸, Արսանիաս⁹ և Արսանոս գետերը: Ելեգեսայում գետն իր ճանապարհի վրա հանդիպում է Տավրոս լեռանը, որը նրան չի դիմադրում՝ չնայած 12.000 քայլ հաստություն ունեցող իր զանգվածին: Գետը Օմիրաս է կոչվում, երբ լեռն է ներխուժում, այն հաղթահարելուց հետո արդեն կոչվում է Եփրատ, նրա հունը ժայռոտ է, և հոսանքը՝ սրընթաց, նույնիսկ այդ լեռն անցնելուց հետո¹⁰:

Պատմագրի խոսքերով նվազ հայտնի չէ նաև Տիգրիս գետը, որը նույնպես սկիզբ է առնում Մեծ Հայքից: Կյուրոս գետի վերաբերյալ Պլինիոսը հայտնում է, որ այն սկսվում է Հենիոքիական լեռներում, որոնք այլոց կողմից կոչվել են Կորաքսյան¹¹: Արաքսը նույնպես սկսվում է նշված լեռներից, ինչպես նաև Եփրատը՝ 6.000 քայլ միջանկյալ

¹ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, Ե., 1971, էջ 838:

² Տե՛ս Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ավարտը և հայկական առաջին պետական կազմավորումները, «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 836:

³ Կապոտեն – Կապույտ (Ծաղկավետ) լեռնաշղթան է, որի հարավային լեռնաբազուկներում են գտնվում բուն Եփրատի (կամ Արևելյան Եփրատ, այժմ Կարա-սու) ակունքները: Տե՛ս Երեմյան Ս.Տ., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 56:

⁴ Անախտիս – Անահտական գավառն է (կամ Եկեղյաց), Բարձր Հայքի 4-րդ գավառը, անտիկ հեղինակների Ակիլիսենեն, այժմյան Երզնկայի շրջանը:

⁵ Դասկուսան – բնակավայրը գտնվել է Փոքր Հայքում, այժմյան Արաբկիր-չայի գետաբերանից արևմուտք, Կողբենից գյուղից հյուսիս:

⁶ Տե՛ս Адонц Н., Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, էջ 80:

⁷ Հայաստանի Ելեգես – Եղեգիսի ջերմուկներն են, այժմ՝ Իլիջա, Կարինից արևմուտք:

⁸ Լյուկոս – չպետք է շփոթել Իրիս գետի (այժմ Եշիլ-Ըրմակ) Լյուկոս վտակի (Գայլ գետ, Թերմոզոն) հետ: Այստեղ խոսքը այն Գայլ գետի մասին է, որը սկիզբ է առնում Եդի-Դերելար լեռնանցքից և Երզնկայի մոտ թափվում է Եփրատ: Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրիստոնեատիկա», հ.1, էջ 290, ծանոթ. 9:

⁹ Արսանիաս-հայկական սկզբնաղբյուրների Արածանի գետն է (Արևելյան Եփրատ), այժմ՝ Մուրադ-չայ: Նույն տեղում, ծանոթ. 10:

¹⁰ Իր ակունքներից մինչև Տավրոսյան լեռները, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում, Եփրատի երկարությունը կազմում է ավելի քան 600 կիլոմետր: Նույն տեղում:

¹¹ Կորաքսյան-Պլինիոսը նկատի ունի Կարմիր Փորակ (այժմ՝ Ալախյուակբար) ջրբաժան լեռնաշղթան Կարսի և Արտահանի միջև: Նույն տեղում:

հեռավորությամբ, որը սնվում է Մուրսիս (հայկական Մուրց գետն է, այժմ՝ Հասան Ղալա-սու) գետակով, ապա թափվում Կյուրոսի մեջ, որը նրան տանում է Կասպից ծով:

Պլինիոսը թվարկում է Հայաստանի սահմանամերձ շրջաններում ապրող ժողովուրդներին: Ամբողջ դաշտավայրը՝ Կյուրոսից սկսած, զբաղեցնում են ալբանները, հետո իբերները, որոնք նրանցից բաժանված են Ալազան գետով (որն իջնում է Կովկասից և գնում է թափվելու Կյուրոսի մեջ):

Ամենակարևոր քաղաքներն են՝ Ալբանիայում՝ Կաբալական¹, Իբերիայում՝ Հարմաստիսը (գետի մոտ), Արմազի-Մցխեթա, Նեորիսը: Այստեղ են Թասիայի և Թրիարեյի շրջանները Թռեղք-Թրիալեթի որոնք հասնում են մինչև Պարիադրես լեռները: Նրանցից այն կողմ ընկած են Կողքիսի ամայի տարածքները: Այդ տարածքների այն մասում, որ նայում է Կերավնյան լեռներին, բնակվում են արմենոխալիբները², ապա հաջորդում է մոսխերի երկիրը³ մինչև Իբերոս գետը, որը թափվում է Կյուրոսի մեջ, նրանցից ներքև գտնվում են սակասեմները⁴, այնուհետև մակրոնները⁵ մինչև Ապսարոս գետը, սրանք են դաշտավայրերի և գառիվայրերի բնակիչները: Հակառակ կողմից, Ալբանիայի սահմաններից սկսած, լեռների ամբողջ շարքի դիմաց գտնվում են սիլվերի վայրի ժողովուրդները, նրանցից ներքև՝ կովկասյան ցեղերը՝ լուբիեմների ժողովուրդը, այնուհետև դիդուրները և սոդիացիները:

Ինչպես Ստրաբոնը, այս պատմագիրը ևս մանրամասնորեն անդրադառնում է հայերի շրջանում Անահիտի պաշտամունքին՝ պատմելով հետևյալը. «Ասում են, որ ոսկեծույլ առաջին արձանը, որ նախորդել է նույնիսկ հոլոսիյուրատոն (մուրճով կոփված) բրոնզաձույլ արձաններին, կանգնեցվել է Անահիտի աստվածուհու տաճարում: Մենք ցույց ենք տվել, թե որ երկրին է պատկանում այդ անունը (Պլինիոսը մատնացույց է անում «Բնական պատմության» 5-րդ գրքի 20-րդ գլուխը, որտեղ խոսում է Անահիտի գավառի մասին. դա Անահտական կամ Եկեղյաց գավառն է՝ Բարձր Հայքի 4-րդ գավառը, ըստ անտիկ հեղինակների՝ Ակիլիսենեն, այժմյան Երզնկայի շրջանը)»: Վերադառնանք արձանին, որը մեծապես պաշտվել է հայ ժողովրդի կողմից: Ապա, ըստ պատմիչի, այն տարվել է որպես ավար պարթևների դեմ Մարկոս Անտոնիոսի մղած պատերազմի ժամանակ: Իհարկե, հեղինակը շփոթում է, քանզի Անտոնիոսը այս ոսկեծույլ արձանը Եկեղյաց գավառի Անահիտի տաճարից տարել է ոչ թե պարթևական, այլ հայկական արշավանքի ժամանակ, այսինքն՝ մ.թ.ա. 35 թ.: Այնուհետև պատմիչը ներկայացրել է բոնոնիացի մի վետերանի հայտնի սրախոսությունը. ըստ որի՝ վերջինիս հյուր եկած Ավգուստոսը (խոսքը Հռոմի կայսր Քայոս Օկտավիանոս Օգոստոսի մասին է) ճաշի ժամանակ հարցնում է նրան, թե ճիշտ է արդյո՞ք, որ այդ արձանը սրբապղծող առաջին մարդը մահացել է կուրանալուց և անդամալույծ դառնալուց հետո: Վետերանը պատասխանում է, որ Ավգուստոսի պատվին տրված ճաշը հենց աստվածուհու արձանի մեկ ազդրից էր, որ հենց ինքն է այդ արձանի առաջին հափշտակողը, և իր ամբողջ հարստությունն այդ ավարի շնորհիվ է գոյացել⁶:

Այսպիսով՝ Պլինիոսի գրքից տեղեկանում ենք, որ Անահիտի ոսկյա արձանը Եկեղյաց գավառի Երիզա ավանում ջարդուփշուր են արել, և ոսկին բաժան-բաժան է արվել Անտոնիոսի ու իր զորքերի միջև: Դրանից հետո, սակայն, նույն տեղում նորից ոսկյա արձան է դրվել, քանզի հայոց բոլոր աստվածներն ունեին մեհյաններ և արձաններ:

Պլինիոս Ավագը վկայություններ ունի հին Հայաստանի ժողովրդագրական հարցերի, մասնավորապես վերաբնակեցումների մասին:

¹ Կաբալական-հայկական աղբյուրների Կապաղակ քաղաքն է, այժմ՝ Կաբալա գյուղը Նիժ գյուղի մոտ:

² Արմենոխալիբներ – բառացիորեն՝ հայախալիբներ, Հայաստանում բնակվող խալիբներ՝ ցեղեր, որոնք գտնվում էին մերձսևծովյան հարավարևելյան շրջանում. խալիբների այն մասը, որը ժամանակի ընթացքում ձուլվեց հայերի հետ: Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրիստոնատիա», հ. 1, էջ 291:

³ Մոսխերի երկիրը համապատասխանում է հայոց Գողթեճական կուսակալությանը, որտեղ բնակվում էր վրացական մեսի կամ մոսի ցեղը:

⁴ Սակասեմե-հայկական Շակաշենն է, Ուտիքի 7-րդ գավառը՝ Կուր գետի հովտի աջակողմյան մասում:

⁵ Մակրոնները այն ցեղերն են, որոնք բնակվում էին Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում՝ Ճորոխի ավազանում:

⁶ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոնատիա», հ. 1, էջ 499:

Պատմիչը ներկայացնում է Տիգրան Բ-ի կողմից Հայաստանում այլ ազգերի ներկայացուցիչներին վերաբնակեցնելու փաստը՝ խոսելով մ.թ.ա. 93 և 91 թվականների մասին, երբ հայոց թագավորը պատերազմ սկսեց Պարթևական թագավորության դեմ և տեր դարձավ Հայաստանի հարավային սահմանների մոտ գտնվող Միջագետքին: Պատմագրի վկայության համաձայն՝ Տիգրանը արաբական թափառական ցեղերին տեղափոխեց հարավային Միջագետքից և բնակեցրեց Օսրոյեն-Եդեսիայի շրջաններում, որոնց հանձնարարեց տարանցիկ առևտրային ճանապարհների վերահսկողությունը: Տիգրանի համար նրանք մաքս էին գանձելու գլխավորապես Եփրատ գետի անցքի մոտ, որը գտնվում էր Զեզմայի արևմտակողմում¹:

Ինչպես նշվեց, Պլինիոսը անդրադարձել է նաև հայկական բնաշխարհին, որի բաղկացուցիչ մասն են կազմում դեղաբույսերը: Նա գովաբանել է դրանց բուսական գորությունը²՝ նշելով, որ պոնտական թագավոր Միհրդատը՝ Տիգրան Մեծի մերձավորն ու բարեկամը, մ.թ.ա. I դարում Հայաստանում աճող բույսերից պատրաստել է դեղ³: Պատմիչը վկայում է, որ Հայաստանը, ինչպես և Մարաստանը հնում հայրենիքն էին մի շարք արժեքավոր խեժաբեր բույսերի, այդ թվում՝ հռչակավոր **ուպանի**: Վերջինիս բուժիչ, եռանդը բարձրացնող հատկությունները խիստ հարգի էին Հռոմում: Ցուփ ու շվայտ կյանքից, սեռական սանձարձակությունից վաղաժամ ծերացած Հռոմի պատրիկները փորձում էին դրա օգնությամբ վերադարձնել կորցրած առողջությունը և երիտասարդությունը: Ուպանը, ինչպես նաև մի շարք արժեքավոր դեղաբույսեր, որոնք դարեր շարունակ անխճճորեն արտահանել են Հայաստանից, հետագայում հայկական բուսաշխարհից իսպառ վերացան: Ըստ նույն պատմիչի՝ Հայաստանում և Կապադովկիայում աճում էր թմրեցնող հատկություններ ունեցող մի բույս, որը մեղմացնում էր վայրի գազանների գայրույթը⁴: Պլինիոսը հիշատակում է նաև adamantis բույսը, որին մոտենալով առյուծը ուժասպառ ընկում է, բժշկագիտական բույս laser-ը, կամ orobitis ներկը, որը օգտագործում են նկարիչները: Ապա հիշատակում է Հայաստանից արտահանվող armenium քարը, որը ներկում էր chrysocoila-ի պես, պաղլեղը (alumen) և այլ քարեր⁵:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, թեև Պլինիոս Ավագի թողած տեղեկությունները բազմաբովանդակ ու նորահայտ չեն, այդուհանդերձ դրանք այլ պատմիչների վկայությունների հետ համադրելով՝ կարելի է պատկերացում կազմել տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի պատմաքաղաքական, վարչատնտեսական, սոցիալ-մշակութային պատկերը: Դրանցում հաղորդվում են տեղեկություններ Հայաստանի տարածքի, նրա ընդգրկած սահմանների, հարևանությամբ գտնվող երկրների ու ժողովուրդների, քաղաքների, վարչական բաժանումների, Հայաստանում այլ ժողովուրդների վերաբնակեցնելու, Անահիտ դիցուհու պաշտամունքի, նրա ոսկեծույլ արձանի ճակատագրի, ժողովրդական բժշկության և դրանում տարբեր բուսական ու հանքային նյութերի կիրառման մասին:

Պատմիչի թողած վկայությունները ներառում են տեղեկություններ երկրի քաղաքների ու վարչական բաժանումների, բնակլիմայական պայմանների, բնաշխարհի, հանքային հարստությունների, ինչպես նաև մշակութային պատմության ու հասարակական հարաբերությունների մասին: Կարևոր հիշատակումներ կան հարևանությամբ գտնվող երկրների ու ժողովուրդների մասին, որոնց հետ հայերը ունեցել են բազմադարյան առնչություններ, բարեկամական կամ կոնֆլիկտային հարաբերություններ: Պատմիչը ազգագրական բնույթի ուշագրավ տեղեկություններ ևս հաղորդում է: Դրանցից թվելի են մասնավորապես Անահիտ դիցուհու պաշտամունքի, ինչպես նաև հռոմեական արշավանքներից հետո նրա ոսկեծույլ արձանի ճակատագրի վերաբերյալ վկայությունները, ժողովրդական բժշկության և դրանում տարբեր բուսական ու հան-

¹ Տե՛ս Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, Ե., 1977, էջ 152-155:

² Տե՛ս http://www.hsearch.am/hom_main.php?hom_id=32963&hom_sid=1256084702-20253100&hom_t=

³ Տե՛ս Թորոսյան Ա., Հայաստանի դեղաբույսերը, Ե., 1983, էջ 4:

⁴ Տե՛ս Վարդանյան Ս., Հայաստանի բժշկության պատմություն, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Ե., 2000, էջ 31:

⁵ Տե՛ս Еремян С., Развитие городов и городской жизни в древней Армении, «ВДИ», 1953, N 3.

քային նյութերի կիրառման մասին: Հոդվածի հեղինակը արձանագրում է, որ թեև Պլինիոս Ավագի թողած տեղեկությունները բազմաբովանդակ ու նորահայտ չեն, այդուհանդերձ դրանք այլ պատմիչների վկայությունների հետ համադրելով՝ կարելի է ունենալ տվյալ ժամանակաշրջանում Հայաստանի պատմաքաղաքական, վարչատնտեսական, սոցիալ-մշակութային առավել ամբողջական պատկերը:

Рафик Наапетян, Гай Плиний (Старший) про Армению и армян,-Из многочисленных трудов выдающегося римского историка, ученого и политического деятеля Гая Плиния(Старшего) Секунда (23-79 н.э.) до нас дошел труд “Естественная история” энциклопедического характера, состоящий из 37 книг. В статье представлена информация про Армению и армян, которую можно найти в основном в книгах V и VI. Оставленные историком свидетельства включают данные о городах и административном делении страны, природно-климатических условиях, природе, минеральных богатствах, а также об истории культуры и общественных отношениях.

В них есть важные упоминания о странах и народах по соседству, с которыми армяне имели многовековые связи, дружеские или конфликтные отношения.

Историк сообщает также примечательные данные этнографического характера. Из них можно привести, в частности, свидетельства о культе языческой богини Анаит, а также о судьбе ее золотой статуи после римских нашествий, о народной медицине и применении разных растительных и минеральных материалов в ней.

Автор статьи констатирует, что не смотря на то, что оставленные Плинием Старшим данные не являются многогранными и новыми, с помощью их сопоставления с данными других историков можно составить историко-политическую, административно-экономическую и социокультурную картину Армении той эпохи.

Rafik Nahapetyan, Gaius Plinius (the Elder) about Armenia and Armenians,-From numerous works of outstanding Roman historian, scholar and politician Gaius Plinius (the Elder) Secundus (23-79 BC) only the work "Natural History", an encyclopedia consisting of 37 books, reached us. This article reveals information about Armenia and Armenians that can be found mainly in the books V and VI. Data, left by the historian, include information on the cities and administrative division of the country, climatic conditions, the nature, minerals, as well as on the history of culture and social relations.

They include important information about the countries and peoples in neighborhood, with whom Armenians have centuries-old ties, friendly or conflict relationships.

The historian also reports remarkable ethnographic data. Particularly, we can mention the evidence about the cult of the pagan goddess Anahit, the fate of her golden statue after Roman invasions, as well as data on traditional medicine and the use of different plants and minerals in it.

The author notes, that despite the fact that the data, left by Plinius the Elder, are not varied and new, their comparison with those of other historians can help to create the historical-political, administrative, economic and socio-cultural picture of Armenia of that era.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Էդիկ Մինասյան, ԱՐԻԱՍԻՐՏ ՀԱՅՈՒՎՈՒՆ.....	3
Արտակ Մովսիսյան, ԿԱՐԵՎՈՐ ԴԻՏԱՐԿՈՒՄ «ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ.....	7
Հենգել Մանուչարյան, ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ.....	13
Ֆելիքս Մովսիսյան, ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	23
Валерий Тунян, НАЦИОНАЛЬНАЯ ИДЕЯ И НАЦИОНАЛЬНЫЕ СОВЕЩАНИЯ В 1914-1917 ГГ.	41
Արման Եղիազարյան, ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԵՑԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ «ԴԱՍԱԿԱՆ» ԵՎ «ՆՈՐ» ՍՓՅՈՒՆՔՈՒՄ (ԼԻՔԱՆԱՆԻ ԵՎ ՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ).....	50
Սամվել Պողոսյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 1878 Թ.	67
Կարինե Եղիազարյան, Քարմիլե Եղիազարյան, ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈՔ (ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ).....	81
Սամսոն Քառայան, ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.....	91
Վահագն Հակոբյան, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՄՆԻԿՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՓՈՒԼԸ.....	96
Կարեն Խաչատրյան, Գագիկ Ժամհարյան, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՕՐՅԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԻԶԲ).....	108
Էդուարդ Զոհրաբյան, ՀԱՅ-ԱՂԲԵԶԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՊԿ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԸՆԿԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐԶ.....	115
Դավիթ Թինոյան, ՀԵԹՈՒՄ Ա-Ի «ՄՈՆԴՈՒԱԿԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՆԴՈՒԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	121
Էմմա Ստեփանյան, ԱՄԵՐԻԿԱՀԱՅ «ԱՐԱՔՍ» ՀԱՆԴԵՍԸ (1905-1907 ԹԹ.).....	128
Վարդիթեր Աբրահամյան, X-XI ԴԱՐԵՐՈՒՄ ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ԶԱՎԹԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՍԵՂԾՎԱԾ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻՎԱՐՈՒՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՊՐՏՈՒՄ.....	135
Լիլիթ Մելիքյան, ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.....	143
Գուրգեն Մուրադյան, ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԻՆԱ ՎԱՇՉԵՎԱՅԻ ՀԵՏԱԶՆՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	148
Դավիթ Կարապետյան, ԱՇՈՑՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ ԸՍՏ ՎԱԽՈՒՇՏԻ ԲԱԳՐԱՏԻՈՆԻԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.....	153
Էդուարդ Հովհաննիսյան, ԴԱՐԱԲԱՂԻ /ԱՐՑԱՆԻ/ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐՈՒՄ».....	159
Տաթևիկ Մինասյան, ՀԱՅՈՒՎՈՒՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԲԴՈՒԼՀԱՄԻԴՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ (XIX ԴԱՐԻ ՎԵՐԶ-XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ).....	166
Արամ Խաչատրյան, ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԱՍԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ 1900-1907 ԹԹ.	174
Սուսաննա Առաքելյան, ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԶ.....	185
Նարինե Նուշերվանյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐԶԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.....	191

Էդուարդ Կեսոյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	196
Աստղիկ Մովսիսյան, ՀՅԴ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ.	206
Լուսինե Գրիգորյան, ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ (1964-1985 ԹԹ.)	215
Մելիք Հովսեփյան, ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ (1964-1985 ԹԹ.)	223
Լիլիթ Մատինյան, Հենրիկ Աբրահամյան, ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՆՈՒՆԴ	229
Սոնա Մելքոնյան, Էթնիկ ՋՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐՔԵԶԱՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏԱՄՔ (1988-1991 ԹԹ.)	237
Դավիթ Զուլհալյան, Կարինե Ասատրյան, ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1991-1994 ԹԹ. ԵՎ ՆՐԱ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ	242
Նժդեհ Հովսեփյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՆԱԿԱՆ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ 1991-2001 ԹԹ.	250
Վահե Հովսեփյան, ԽՈՋԱԼՈՒԻ ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ	261
Վարդան Մակիճյան, ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	269
Գեղամ Ասատրյան, ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ	273
Աննակ Սարգսյան, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1995-2017 ԹԹ.	281
Гаяне Солахян, ЕВРАЗИЙСТВО В СОВРЕМЕННОМ ИДЕЙНО – ПОЛИТИЧЕСКОМ ПРОСТРАНСТВЕ РОССИИ	289
Ռոման Գազանջյան, ՄՈՆԻՐՈՅԻ ԴՈԿՏՐԻՆԱՆ ՈՐՊԵՍ ԱՄՆ-Ի XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ	295
Զուլիետա Կճանյան, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ. ԿԱՆԱԴԱԿԱՆ ՈՒԴԻՆ ԵՎ ԼՈՐԴ ԴԱՐԵՄԸ	302
Ժաննա Հարությունյան, ՇԱՌԼ ԴԸ ԳՈԼԻ ԱՖՐԻԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	310
Արսեն Զուլֆալալյան, ԶՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԹՈՒՐՔ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆՆԵՐԻՆ	316
Георгий Коларов, МАОИЗМ В ЛАТИНСКОЙ АМЕРИКЕ. СЕНДЕРИЗМ, КАК МАОИЗМ КОНЦА XX ВЕКА	322
Անդրանիկ Առաքելյան, ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԻՋԱՐԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ (1992-2011 ԹԹ.)	328
Աշոտ Թովմասյան, ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱՔԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ	333
Արշալույս Տետեյան, ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԶԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱԴՐՔԵԶԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	337
Միգր Հովհաննիսյան, ԳԻՏԱԿԱՆ ՀՂՈՒՄՆԵՐԻ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	344
 ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ	
Ռաֆիկ Նահապետյան, ԳԱՅՈՍ ՊԼԻՆԻՈՍ (ԱՎԱԳ) ՍԵՎՈՒՆԴՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ	349
Սաակ Տարոնցի, ԱՐԵՎ-ՍԿԱԿԱՌԱԿԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԲՐՈՆԶԵ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՐԴԱՍՈՏԻՎՆԵՐՈՒՄ	355

Արմինե Գաբրիելյան, ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԽԵՑԵՂԵՆԻ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ (Մ.Թ.Ա. I – Մ.Թ. III ԴԴ.)	372
Ռայա Սարգսյան, ՄԻՐԱՔ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ ԳՏՆՎԱԾ ՁԻԹԱՃՐԱԳՆԵՐԸ	384
Հասմիկ Հարությունյան, ԿՈՎԿԱՍԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԼԵԶԿԱԴԱԿԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)	388
Արուսյակ Ղարիբյան, ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐՔԵՏԻՊԱՅԻՆ ԳԾԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԷՊՈՍՈՒՄ	401
Մերի Ղալլաբյան, ԱԿԱՆԴԱԿԱՆ ՏԻԿՆԻԿԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈՒՆԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ԵՔՊԹ-Ի ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ	407
Մարինե Հարությունյան, ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՏԻՊԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ XVII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII Դ. ՍԿԶԲԻՆ	411

ԱՐԿԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

Անի Նազարյան, ԳՅՈՒՄՐՈՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ՎԻՐՏՈՒԱԼ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ	416
Siranuysh Araqelyan, ON A KHACHKAR (STONE CROSS) INSCRIPTION IN ARINJ	423
Garik Atanesyan, NEW INTERPRETATIONS OF PUBLIC FUNCTIONS OF MONUMENTS IN THE YEREVAN’S CONTEMPORARY PUBLIC DISCOURSE	427
Հայկազ Հովհաննիսյան, Հրանտ Ավանեսյան, Սահակ Հովհաննիսյան, Մարինե Մինասյան, ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	434
Հայկուհի Մուրադյան, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	441
Ամբատ Հովհաննիսյան, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՊՈՆԵՏԻԿԱՆ ԵՎ ՇԵՔՍՊԻՐԻ ՆՈՐՈՎԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ (ՆՈԹԵՐ ՈՒԼԵԱՄ ՇԵՔՍՊԻՐԻ «ՀԱՄԼԵՏԻ»՝ ԱՐԱՄ ԹՈՓՁՅԱՆԻ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ)	448
Анаит Зурабян, «МОДЕЛЬ ПУТИ» И ЕЁ ОТРАЖЕНИЕ В РОМАНЕ «ЖИЗНЬ И СУДЬБА»	462
Դիանա Հակոբյան, ԵՐԵՄԻԱ ՄԵՂՐԵՑՈՒ «ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ը՝ ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ	467
Arevik Minasián, ANÁLISIS SEMÁNTICO DE LOS REFRANES Y PROVERBIOS CON EL COMPONENTE “PERRO” EN ESPAÑOL Y ARMENIO	473
Mariana Yepremián, ANÁLISIS SEMÁNTICO - COMPARATIVO DE LOS REFRANES Y PROVERBIOS QUE DENOTAN EL CONCEPTO GATO EN ESPAÑOL Y ARMENIO	482
Ասյա Ղարիբյան, ՎՐԱՑԵՐԵՆԻ ՆԱԽԱԲԱՅԵՐՈՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԸ	491
Լիանա Մալխասյան, ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	497

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾԱՐԺԵՔ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԱԶԱՍԱՄԱՐՏԻ ԿԻՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ	503
ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՌԷՆԱԳՐԱՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ	506

ՄԵՐ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ

САРКИС СУРЕНОВИЧ КАЗАРОВ	512
--------------------------	-----

ՀԱԿԵՐԺԻ ԶԱՍՓՈՐԴ

ԷԴՎԱՐԴ ԳԱՆՈՒՄՏԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ	514
---------------------------	-----

ՀԱԿՈՒՔ ԲԱՂՂԱՍԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ. ԿԱՍՏԱԿԱՇԱՏ ԽՄԲԱԳԻՐՆ ՈՒ ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ	516
<i>ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....</i>	<i>519</i>